

**Տ. ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ ԱՎԱԳՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՎԱՄԱՐՁՄԱՆ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**
(5 մայիսի 2005 թ.)

*«Այսօր համբարձար փառօր յ յերկինս և
գլուխածին մարմինդ Քո հրաշափառապէս
լուսազարդեցեր»:*

(Շամազիրք)

«Յանուն Տօր և Որդոյ և Տօգոյն Սրբոյ, ամէն»:

Միրելի հավաքացյալ քույրեր և եղբայրներ, ահա այսպէս է նկարագրում օրվա ժամանուրը Քրիստոսի համբարձման դրվագը, որը փեղի ունեցավ Նրա հրաշափառ Հարություննից ճիշտ 40 օրեր հետո:

Քրիստոս հարությունից անմիջապէս հետո երկինք չվերացավ, որպեսզի հասարակի Իր հարությունը բազում ձևերով: Նախ մի քանի անգամ երևաց Իր աշակերտներին, ինչպէս ասվում է Տովիաննու Ավետարանում. «Այս երրորդ անգամն էր, որ Տիմոս երևաց Իր աշակերտներին՝ մեռելներից հարություն առնելուց հետո» (Տովի. ԻԱ 14): Տերը հարությունից հետո կերավ և խմեց Իր ծառաների հետ, Վարդապետը՝ Իր աշակերտների հետ, Առաքողը՝ առաքյալների հետ: Տերը ջուներ կարիք ուրելու, սակայն կերավ, որպեսզի առավել ևս հասարակի, որ Իր հարությունը ստույգ է, հայտարարելով, որ այն մարմնով, որով կրեց ամեն փեսակ անարգանք և խաչի մահ, նույն մարմնով էլ հարություն առավ:

Ինչպէս Քրիստոս ստուգապէս հաստատեց, որ մեռավ, այնպէս էլ պետք է հաստատել, որ ստուգապէս հարություն է առել: Որովհետև հարությունից հետո եթե մեկ անգամ երևար աշակերտներին և ապա համբարձվեր, կասկածանք կառաջանար աշակերտների մեջ, թե ճշմարտապէս հարություն չի առել, այլ թվացյալ: Դրա համար հարությունից հետո քառասուն օր մնաց և շար անգամ երևաց առաքյալներին և կերավ նրանց հետ ու խոսեց և վերացրեց նրանց սրտից բոլոր կասկածները:

Քրիստոս քառասուն օր հետո համբարձվեց, որովհետև Նրա մահվան պատճառով քառասուն ժամ փրփմեցին Իր աշակերտները, քանի որ Տիրոջ հարությունը գիշերը եղավ, իսկ աշակերտներին արշալույսին երևաց, որի համար էլ սրացվում է քառասուն ժամ, և դրա փոխարեն պետք էր քառասուն օր ուրախանալ, որը ցույց է փայլիս, որ այն փոքր փրփմության համար, որ այսօր կրում ենք հանուն Քրիստոսի սիրո, այնպեղ մեծ մխիթարության ենք արժանանալու:

Դարձյալ, Տորդանանում մկրտվելուց հետո Ս. Տօգուց անապատ փարվեց, և քառասուն օր ու գիշեր մնալով հաղթեց փորձողների առաջնորդին, այսինքն՝ սաքանային, և դրանով մեզ գորացրեց արիաբար մարտնչել ընդդեմ ախտյանի՝ ասելով. «Քաջալերվեցե՛ք, որովհետև Ես հաղթեցի աշխարհին» (Տովի. ԺԶ 33):

Նամբարձվեց Քրիստոս, որպեսզի Սուրբ Նոզին մեզ առաքի՝ ըստ հեղինակ խոսքի. «Եթե ես չգնամ, Մխիթարիչը ձեզ մոտ չի գա. իսկ եթե գնամ, նրան կողարկեմ ձեզ մոտ» (Նովի. ԺԶ 7):

Նամբարձվեց Քրիստոս, որպեսզի մեր հույսը մեծանա, որովհետև ասաց. «Եվ եթե գնամ և ձեզ համար էլ փեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ կվերցնեմ Ինձ մոտ, որպեսզի ուր ես լինեմ, դուք ևս այնպեղ լինեք» (Նովի. ԺԶ 3): Քրիստոս մեր բնությունը մեզանից առաջ փարավ Իր հեղ ապկի վեր, քան բոլոր երկինքները, և մեզ հույս փվեց, որ մենք էլ ենք այնպեղ հասնելու, ինչպես ասում է Նովիանենա Ավետարանիչը. «...և ուր ես եմ, այնպեղ կլինի և Իմ ծառան» (Նովի. ԺԲ 26):

Միրելի հավաքացյալներ, Քրիստոսի համբարձման դրվագը նկարագրելիս Ղուկաս Ավետարանիչը գրում է. «Ապա նրանց փարավ-հանեց մինչև Բեթանիա և, բարձրացնելով Իր ձեռքերը, օրհնեց նրանց: Եվ մինչ Նա օրհնում էր նրանց, բաժանվեց նրանցից և դեպի երկինք էր վերանում: Իսկ նրանք երկրպագեցին Նիսուսին և մեծ ուրախությամբ վերադարձան Երուսաղեմ» (Ղուկ. ԻԴ 50 - 52):

Բեթանիայից Չիթենյաց լեռան վրայից համբարձվելը ցույց է փալիս, որ Ադամի սգո փունը երկնքում ուրախության փոխվեց, քանի որ «Բեթանիան» սգի ու չարչարանքների փուն է թարգմանվում, որը խորհրդանշում է սգի ու չարչարանքների այն երկիրը, ուր ընկավ մեր բնությունը դրախտի վայելչությունից:

Եվ ինչպես Բեթանիան մոտ է ներքին Երուսաղեմին, այսպես էլ ներքին աշխարհը, ուր մենք ենք բնակվում, մոտ է Վերին Երուսաղեմին, և եթե կամենանք, փութով կբարձրանանք:

Գործք Առաքելոցում ասվում է. «Եվ երբ այս խոսքերն ասաց, մինչ նրանք դեռ նայում էին, երկինք վերացավ» (Գործք Ա 9): Քրիստոս երկինք համբարձվեց աշակերպների աչքի առաջ, որպեսզի աշակերպները պարզորոշ փեսնեն Նրա համբարձվելը, որովհետև հարության ավարտը փեսան նշաններով և խոսելով Նրա հետ, իսկ սկիզբը չփեսան, իսկ համբարձվելիս սկիզբը փեսան, իսկ ավարտը ոչ, և երկինք գնալու մասին հրեշտակներից իմացան, ովքեր ասում էին. «Ո՛վ գալիլիացիներ, ինչո՞ր կանգնած նայում եք երկնքին. այս Նիսուսը, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես փեսաք Նրա երկինք գնալը» (Գործք Ա 11):

«Իսկ նրանք երկրպագեցին Նիսուսին և մեծ ուրախությամբ վերադարձան Երուսաղեմ» (Ղուկ. ԻԴ 52):

Ուրախացան, որովհետև փեսան այդպիսի փառքով վերանալիս Նրան, Ում հրեաները նախապրելով խաչը հանեցին ու սպանեցին:

Պնարք է իմանալ նաև, որ Տերը երկինք վերացավ հրեշտակների մեծ բանակներով ու սրբերի գնդերով, ովքեր Իր հետ հարություն առան գերեզմանից և Իր հետ էին քառասուն օր շարունակ, որոնց հետ վերանալով անցավ անմարմինների բոլոր գերաշխարհիկ դասերը:

Քրիստոս համբարձվեց և նստեց Նոր աջ կողմը, այնպեղ, որպեղից եկել էր մեզ համար, որպեղից եկել էր մեր փրկության ճանապարհը ցույց փալու համար, դրա համար էլ Նիսուս Իր երկրային առաքելության վերջավորությունը պիտի ասեր. «Ելա Նորից և եկա աշխարհ, դարձյալ թողնում եմ աշխարհը և գնում Նոր մոտ» (Նովի. ԺԶ 28):

Երբ Քրիստոս Չիթենյաց լեռան վրայից համբարձվում էր երկինք, ինչպես Ավետարա-
նում է գրված, Նա «...բարձրացնելով Իր ձեռքերը, օրհնեց նրանց»: Օրհնեց նրանց այն ձեռ-
քերով, որոնցով առաջին մարդուն սրբեղծեց, որպեսզի առաջին անեծքի դարակնիքը վերց-
նի և աճեցնի ու բազմացնի փրկության Ավետարանը: Ապա երկնասարեղծ ձեռքերով ձեռնա-
դրեց առաքյալներին:

Նրանք դայիր եղել էին ժողովրդին սպասավորելով: Զահրնկալ եղել էին այն ժամանակ,
երբ նրանց ասաց. «Դու՛ք եք աշխարհի լույսը» (Մատթ. Ե 14): Եվ հիվանդներին օժել կար-
գադրելով նրանց սանկավազներ կարգեց: Իսկ արքի առաջին պտղից ճաշակել փառով,
որը միայն քահանաներն էին ուրում, նրանց քահանաներ կարգեց: Ապա հարությունից հե-
տո փչելով նրանց վրա Սուրբ Հոգին՝ նրանց եպիսկոպոսներ արեց, և նրանց հանելով Չի-
թենյաց լեռ դարձրեց կաթողիկոսներ, ամեն ինչ նրանց լիապես շնորհելով:

Այսօր մեր Տոնացույցում նշված է նաև մեկ այլ կարևոր փոխ, Հայրապետական Աթոռի
Սսից Ս. Էջմիածնում վերահաստատության: Այն նվիրապետական Աթոռը, որը հաստա-
տեցին Քրիստոսի առաքյալներից Ս. Թադեոսն ու Ս. Բարդուղիմեոսը, որն օժվեց և սրբվեց
Գրիգոր Լուսավորչի փեսիլքով, որը հայացվեց Օշականի սրբի, այբբենասարեղծ ու գրագյուր
վարդապետ Ս. Մեսրոպ Մաշտոցի անժանգելի գրի պայծառությամբ և որն իր կործանու-
մից փրկվեց Ավարայրի դաշտում վասն հավաքքի մարտնչած Կարմիր Վարդանի հաղթա-
նակած սրով:

Ուստի, սիրելիներ, այս առիթով շնորհավորում եմ բոլորիդ, մասնավորապես ազգիս
Վեհափառ Հայրապետին և մնում աղոթող Հայ Եկեղեցու Հայրապետական Աթոռի, նրա
գահակալի և համայն հայ ժողովրդի համար:

Հայցելով Տիրոջ սերը, շնորհը և խաղաղությունը բոլորիդ համար, այժմ և միշտ և հա-
վիպյանս հավիպենից, ամեն: